յԻլվով. այս պատահմունքս կ'ապահովէ ինչպէս Ակոբսոյի՝ նոյն և Հռիփսիմեայ կեանքը և ապրուստը Իլվովի մէջ։ Խոցիմիրսքի Կամենիցի ունևոր և անուանի քաղաքացեաց մին էր, նորա փառաւոր տունն էր Հայոց հրապարակին արևմտեան ծայրը, ուր այժմ Լեհյոց փառաւոր եկեղեցին կանգուն կայ 'ի պատիւ Աժենասուրբ Երրորդութեան։ Խոցիմիրսքեայ բարօրութեան բան չէր պակասել, ըստ արտաքնոյն. այլ որովհետև չկայ աշխարհիս վրայ կատարեալ երջանկութիւն, սա ևս ունէր իւր վիշտը. զի զաւակները չէին ապրել. այդոր դարման՝ նա բան չէր խնայած, առատ տուրք և ողորմութիւն, ջերմ աղաչանք պաղատանք և սուրբ տեղեաց ուխտագնացութիւն։

Իլվով անցնելուն պէս անմիջապէս կը ծնանի նորա կինը՝ Մարգարիտա դստրիկը. այլ ինքն ճանապարհին վտանգուած լինելով շուտով կը վախճանի։ Խոցիմիրսքի երկար ժամանակ կ'ողբայ իւր սիրելի ամուսինը, և բոլոր իւր սէրը փոքրիկ Մարգարիտայի վրայ կեդրոնացընելով՝ երկրորդ ամուսնութիւն մտքէն չանցըներ։

Նորա անկին տան՝ տանտիկին հարկաւոր էր, բարեպաշտօն, զգաստ, միանգամայն հայ, որ առաջնորդ և խնամակալ լինէր փոքրիկ Մարգարիտային. Հռիփսիմէ պառաւն այդ բանին շատ յարմար էր։ Ստեփանի ալ հայր և առաջնորդ կը պակասէր։ Խոցիմիրսքի սիրով բացաւ իր տան դռները այդ անտուն և անինչ պատանեկին դիմաց։ Նորհակալութեամբ մտան նոքա իրենց նոր բունին մէջ, որով և երկու կողմէն մեծապէս գոհ եղան։ Կը գտնան զիրար Կամենիցցի Հայ պանդուխտները, 'ի թիւս որոց կ'աւելնայ ապա և այլ ոմն